MS CMS admin ver. 8.2 կայքի կառավարման համակարգի օգտագործողի ուսումնական ձեռնարկ

Նախաբան

Հարգելի օգտատեր, ձեզ ենք ներկայացնում կայքի կառավարման MS CMS admin ver. 8.2 նոր համակարգը: CMS-ը հապավում է (անգլ. Content Management System), որի նպատակն է իրականացնել առկա կայքի կառավարումը ոչ մասնագետների կողմից: Սակայն դա չի նշանակում, որ կայքի էֆեկտիվ կառավարման համար պետք չէ ունենալ որոշակի գիտելիքներ կիրառվող տեխնոլոգիաների և ոլորտի առանձնահատկությունների մասին:

MS CMS admin ver. 8.1-ի համեմատությամբ կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- Սեփական ֆայլ մենեջեր՝ էլ ավելի մեծ հնարավորություններով.
- Մուտքերի խմբային նշում և հեռացում.
- Մուտքի կրկնօրինակի ստեղծման ժամանակ որպես կրկնօրինակ մակնշում.
- Կառավարման համակարգի դիզայնի բարելավում և օպտիմալացում.
- Օգտատերերին առկա համակարգերի հետ աշխատելու լիազորման հնարավորություն.
- Ինֆորմացիոն տարրերի համակարգում մուտքերի դիրքի փոփոխություն կոճակներով (beta).
- Անվտանգության բարձրացում.

Ընդհանուր առմամբ կայքի կառավարումը հանգում է 3 հիմնական գործողության: Ինֆորմացիայի պահպանման, խմբագրման և հեռացման: Դա CMS-ի հիմնական առաքելությունն է: Մեր նպատակն է եղել անել այնպես, որ կայքի կառավարումը լինի մատչելի, հաճելի և անվտանգ:

Մեր CMS-ի նախագծման ժամանակ զերծ ենք մնացել ավելորդ «հարմարավետությունից»: Մեր նպատակն էր անել այնպես, որ օգտագործողը գործողությունները կատարի հասկանալով այլ ոչ թէ մեխանիկորեն: Միայն այդ դեպքում է հնարավոր էֆեկտիվ կառավարել ռեսուրսը:

Կայքը բաղկացած է կայքի համընդհանուր հասանելի մասից (փաստացի կայքի հիմնական նպատակը դա է, որպեսզի բոլորը կարողանան անարգել մուտք գործեն և օգտվեն տրամադրված հասանելի տեղեկատվությունից) և ադմինիստրատիվ կառավարման մասից (այդտեղ մուտքը փակ է բոլորի համար բացի լիազորված այն անձից՝ ադմինիստրատորից, որը պատասխանատվություն է կրում կայքի կառավարման և անվտանգության համար):

Ադմին համակարգ մուտք գործած ցանկացած մարդ կարող է կատարել կայքում բովանդակային և այլ փոփոխություններ, այդ պատճառով կայքի կառավարման համակարգ մուտքի տվյալները պետք է տրամադրել միայն վստահելի մարդկանց՝ նախընտրելի է խիստ սահմանափակ թվով:

CMS-ը կառավարում է ինչպես ադմին համակարգը այնպես էլ ամբողջ կայքը: Այն ծրագիր է, որը օգտագործում է 2 ծրագրավորման լեզուներ PHP, Javascript և MySQL տվյալների բազա, CSS, HTML և այլն:

Մեր CMS-ի վրա աշխատանքները սկսվել են 2006 թվականից և շարունակվում են մինչ այսօր: Մենք ավելի ու ավելի ենք կատարելագործում այն, որպեսզի դուք հեշտությամբ կառավարեք ձեր կայքում առկա տեղեկատվությունը:

Եթե օգտագործման ընթացքում կունենաք դիտողություններ և առաջարկներ կարող եք ուղարկել մեզ՝ օգնելով համակարգի հետագա զարգացմանը և կատարելագործմանը:

Հիմնական համակարգերը և ենթահամակարգերը:

Որպես կանոն կայքերը ըստ նպատակային նշանակության լինում են.

- Ինֆորմացիոն կայքեր
- Կայք-կատալոգներ
- Ինտերնետ խանութներ
- Լրատվական կայքեր
- Պատկերասրահներ և այլն

Յուրաքանչյուր բաժին կառավարվում է կառավարման համակարգի համապատասխան բաժնից: Դրանք կայքի բաժինների կառավարման համակարգերն են:

Կան նաև դրանք սպասարկող ենթահամակարգեր, որոնք անկախ չեն օգտագործվում այլ սպասարկում են այդ համակարգերը.

- Պարամետրերի կառավարում
- Կոնֆիգուրացիա

- Օգտատերերի կառավարում
- Ինֆորմացիոն տարրերի կառավարում
- Կատեգորիաների կառավարում

Վերջիններս օգտագործվում են հիմնական համակարգերի կողմից:

Կոնկրետ պրոյեկտի շրջանակներում համակարգերն ու ենթահամակարգերը կարող են տարբերվել, սակայն աշխատանքի սկզբունքը մնում է նույնը: Այդ պատճառով էլ շատ կարևոր է հասկանալ աշխատանքի սկզբունքը:

Մուտք կառավարման համակարգ.

Կայքի կառավարման համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ է կայքի հասցեից հետո հավաքել /admin/

Օրինակ.

https://www.website.am/admin/

Կայքը վերահասցեավորվում է.

https://www.website.am/admin/users/login/

Պետք է մուտքագրել համապատասխան օգտանունն ու գաղտնաբառը և մուտք գործել կառավարման համակարգ.

Կառավարման համակարգ և ինֆորմացիոն էջերի կառավարում

Առաջին մուտքի ժամանակ ցուցադրվում է ինֆորմացիոն էջերի կառավարման բաժինը: Այն առավել հաճախ օգտագործվող բաժիններից է:

Ունի հետևյալ տեսքը.



Վերևից ներքև ունենք.

- հիմնական մենյուն, որի միջոցով կարելի է մի բաժնից անցնել մյուս բաժին,
- ավելի աջ գտնվում է էջերի ընտրման բաժինը,
- ներքևում գտնվում է նոր էջի ավելացման կոճակը,
- վերջում դասավորված են արդեն առկա բոլոր էջերը, որոնք ներկայացված են տողերով և յուրաքանչյուրի համար կան կրկնօրինակման, խմբագրման և հեռացման կոճակներ:
- մուտքի հեռացման համար կարելի է նաև ընտրել բոլորը կամ առանձին-առանձին և սեղմել «Հեռացնել ընտրվածները»: Եղեք ուշադիր պատահաբար չհեռացնելու համար ձեզ անհրաժեշտ մուտքերը:

Հիմնական մենյուն իրենից ներկայացնում է հղումների խումբ:

Էջերի ընտրման բաժինը վայր ընկնող ցուցակ է, որի ցանկացած տարբերակ ընտրելու դեպքում կատարվում է էջերի ֆիլտրում և բոլոր էջերից ցուցադրվում է միայն ընտրված էջը:

«Ավելացնել նոր ինֆորմացիոն էջ» կոճակը սեղմելիս տեղափոխվում ենք ինֆորմացիոն էջերի ավելացման ինտերֆեյս:



Այն իրենից ներկայացնում է ֆորմա, որի դաշտերը պետք է լրացնել և վերջում պահպանել:

Մենք տեսնում ենք 3 ներդիր (tabs)՝ «Հիմնական», «Հայերեն», «Ռուսերեն» և «Անգլերեն»:

Վերջին երեքը, ինչպես հասկացաք, պայմանավորված են կայքում առկա լեզուների քանակով:

«Հիմնական» ներդիրը ունի հետևյալ դաշտերը.

- «Հրապարակել» դաշտը, նշելով կամ չնշելով որոշում ենք ցուցադրել կայքում այդ էջը թե ոչ: Այսինքն դուք կարող եք ունենալ էջ, որը կարող եք նաև անջատել և չցուցադրել՝ առանց հեռացնելու անհրաժեշտության:
- «Ներքին էջ» դաշտի բացատրությունը հետևյալն է. Կայքի դիզայնի մեջ երբեմն անհրաժեշտ է լինում ունենալ բովանդակություն, որը կզբաղեցնի էջի ողջ լայնությունը: Սակայն այն դեպքերում, երբ դրա անհրաժեշտությունը չկա նշելով այդ դաշտը համակարգը այն դարձնում է ներքին էջ և աջից ու ձախից ավելացնում է ազատ տարածություններ:
- Հիմնական պատկեր դաշտն օգտագործվում է յուրաքանչյուր էջի համար պատկեր կցելու համար: Հիմնականում օգտագործվում է meta tag-երի համար: Օրինակ, Երբ որևէ հղումով կիսվում եք ասենք facebook-ում, կայքը այդ հղումից ստանում է վերնագիր, նկար և համառոտ նկարագրություն: Հենց այդ նկարն էլ տեղադրում եք այստեղից:

Այդ դաշտի կողքի կան 3 կոճակներ:

- Առաջին կոճակը բացում է ֆայլ մենեջերը
- Երկրորդ կոճակը ցույց է տալիս ընթացիկ (ընտրված) պատկերը
- Երրորդ կոճակը մաքրում է նկարի հղման դաշտը



Ցանկացած ֆայլ ինտերնետում պետք է ունենա իր ունիկալ հղումը՝ այն չպետք է կրկնվի: Ինչպես օրինակ ձեր հեռախոսահամարը: Այդպես էլ օրինակ այս նկարը պետք է լինի ունիկալ հղումով: Ձեր կայքի այցելուն չի կարող տեսնել նկարը, որը գտվում է ձեր համակարգչում: Որպեսզի այն լինի հասանելի ինտերնետում, պետք է այն ներբեռնել սերվեր:

Սերվերը դա հզոր համակարգիչ է, որը կարող է «հեռարձակել», տրամադրել այն բոլոր «կլիենտ», պահանջող համակարգիչներին, որոնք ցանկանում են այդ ֆայլը կամ տեղեկատվությունը դիտել: Կայքի ծրագիրը ևս տեղադրվում է սերվերում, որը «ուղարկում» է տեղեկատվությունը այն բոլոր համակարգիչներին, որոնք հարցում են կատարում դեպի սերվեր:

Ստացվում է, որ եթե մենք զցենք այդ պատկերը սերվեր և կանչենք, ապա կկարողանանք օգտագործել այն մեր էջերում:

Դրա համար առկա է «file manager»: Այն համակարգ է, որը թույլ է տալիս կառավարել առկա ֆայլերը (ներբեռնել, դասավորել, հեռացնել, փոփոխել):

Սեղմելով առաջին կոճակին մենք հայտնվում ենք file manager-ում



Ֆայլ մենեջերում կա 2 թղթապանակ «files» և «images»: Առաջինում սովորաբար պահվում են նկար չհանդիսացող ֆայլերը իսկ երկրորդում նկարները: Սակայն դա պայմանական է: Նոր ֆայլ մենեջերում՝ ի տարբերություն նախորդին այդպիսի սահմանափակում չկա: Սակայն այդպիսի բաժանումը նախընտրելի է ավելի կազմակերպված կառուցվածք ունենալու համար:

Ուսումնասիրենք առկա գործիքները առանձին-առանձին.

1. Վերադարձ սկզբնական թղթապանակ՝ օգտագործվում է սկզբնական թղթապանակ վերադառնալու համար

2. Վերադարձ նախորդ թղթապանակ՝ օգտագործվում է մեկ թղթապանակով հետ գնալու համար
3. Ստեղծել թղթապանակ.Դաշտում գրում ենք ստեղծվող թղթապանակի անվանումը և սեղմում «Ստեղծել» կոճակը: Ընթացիկ թղթապանակում ստեղծվում է այդպիսի անվանումով նոր թղթապանակ:

4. Անվանափոխել թղթապանակը/ֆայլը: Նշում ենք ֆայլ կամ թղթապանակ, սեղմում գործիքի վրա, նշված դաշտում գրվում է օբյեկտի ընթացիկ անվանումը, դաշտում գրում ենք օբյեկտի նոր անվանումը և սեղմում անվանափոխել: Պետք է նշել միայն մեկ օբյեկտ:



5. Տեղափոխել օբյեկտը: Նշում ենք այն օբյեկտները, որոնք ուզում ենք տեղափոխել այլ թղթապանակ: Դաշտում գրում ենք այն հասցեն, ուր ուզում ենք տեղափոխել նշված օբյեկտները և սեղմում ենք «Տեղափոխել» կոճակը: Ուշադրություն, քանի որ օգտատերերը կարող են դժվարանալ նոր հասցեյի ճիշտ նշման հարցում մենք ստեղծել ենք հասցեների քարտեզ, որտեղ նշված է ֆայլ մենեջերի ողջ կառուցվածքի քարտեզը և դուք հեշտությամբ կարող եք ընտրել այն հասցեն, որտեղ ուզում եք տեղափոխել ընտրված օբյեկտները:



Ահա և ֆայլ մենեջերի կառուցվածքի քարտեզը. Նշելով ձեր նախընտրած դասավորության վրա դաշտում ստանում ենք տվյալ թղթապանակի հղումը:



6. Ընտրել նշված օբյեկտը: Օգտագործվում է ընտրված օբյեկտի/օբյեկտների հասցեները ֆորմայի դաշտ տեղափոխելու և հետագայում պահպանելու համար:
7. Օբյեկտի հասցեյի կրկնօրինակում-պահպանում հիշողության մեջ: Երբ ձեզ անհրաժեշտ է տվյալ հղումը clipboard-ում պահպանելու և մեկ այլ տեղ տեղափոխելու (paste) համար:
8. Ընտրված օբյեկտների տեռացում
9. Նշել բոլոր օբյեկտները

Նշենք նաև, որ ֆայլ մենեջերը հիշում է այն վերջին թղթապանակի հասցեն, որը դուք բացել էիք աշխատելիս (նույնիսկ օրեր հետո էլ) և դուք սիպված չեք լինի ամեն անգամ նորից բացել ձեզ անհրաժեշտ հասցեն երբ աշխատում եք կոնկրետ թղթապանակի հետ:

Ահա ֆայլ մենեջերի բոլոր գործիքների նկարագրությունները:

Ֆայլ մենեջերում կան նաև ինֆորմատիվ հատվածներ: Օրինակ գործիքների ներքևում ներկայացվում է ընթացիկ թղթապանակի հասցեն: Աջ մասում ներկայացվում է ընթացիկ թղթապանակում առկա ֆայլերի և թղթապանակների քանակը: Համակարգը ցույց է տալիս արգելված կամ ֆայլի չափի գերազանցման դեպքերի տեղեկատվությունը:

Նոր ֆայլեր ներբեռնելու համար կարող էք սեղմելով դաշտի վրա համակարգչից ընտրել ֆայլերը (թույլատրում է բազմաթիվ ֆայլերի միաժամանակ ընտրում) կամ ուղղակի համակարգչից ֆայլերը քաշել և գցել այս դաշտի մեջ (drag & drop): Դրանք համարժեք գործողություններ են:

Նախկինում չնայած մեր բազմաթիվ հորդորներին՝ (գրեք անպայման լատինատառ, իսկ բացակների (space, пробел) փոխարեն օգտագործեք «–» կամ «_» սիմվոլները: Նույն կանոններն են գործում նաև ֆայլերին անուններ տալիս: Ֆայլերը մինչև file manager ներբեռնելը պետք է անպայման մշակել և նվազեցնել դրանց չափսերն ու քաշը: Հիշեք, որ եթե մեծ չափսերով պատկերին էջում ցուցադրելիս փոքր չափսեր եք տալիս դրանից այն չի փոքրանում: Մեծ պատկերներով էջի բեռնման ժամանակ էջի ցուցադրությունը դժվարանում է, բացի այդ այն մեծ տարածք է զբաղեցնում սերվերում: Ֆայլերի անունները պետք է լինեն լատինատառ և կարճ: Մի օգտագործեք հատուկ սիմվոլներ (փակագծեր, ստորակետներ, վերջակետներ և բազմապիսի այլ սիմվոլներ)) օգտատերերը անտեսում էին դրանք:

Նոր ֆայլ մենեջերում ավելացրել ենք ֆայլերի անվանման մեջ ոչ լատինատառ սիմվոլների և բացակների (space) ավտոմատ հեռացման համակարգը:

Այստեղ կարող եմ խորհուրդ տալ լինել կարգապահ և կարգ ու կանոն սահմանել ձեր ֆայլերի մեջ:



Անցնենք մյուս ներդիրներին: Բոլոր ներդիրների դաշտերը կրկնվում են մի տարբերությամբ, որ նախատեսված են յուրաքանչյուրն իր լեզվով բովանդակության համար: Այդ պատճառով կանդրադառնանք միայն «Հայերեն»-ին: Մյուսները կանեք նույն կերպ:

Այստեղ ամեն ինչ շատ պարզ է՝ ունենք WYSIWYG խմբագրիչ (անգլ. What You See Is What You Get – Ինչ որ տեսնում ես այն էլ կստանաս): Այն շատ նման է օրինակ Microsoft word ծրագրով աշխատելուն: Դրա միջոցով կարող եք ստեղծել բովանդակություն առանց կոդ գրելու:

Ասեմ, որ ինտերնետ էջերը բաղկացած են կոդերից, HTML, CSS, Javascript և այլն: Մինչ WYSIWYG խմբագրիչների ի հայտ գալը էջերի խմբագրում կարողանում էին անել միայն HTML մասնագետները: Հիմա դրա իմացությունը պարտադիր չէ: Այսպիսով ինչ որ գրում եք այդ դաշտում խմբագրիչը այն վեր է ածում HTML կոդի: Այդ կոդը կարող եք տեսնել և խմբագրել ձախ վերևի անկյունում գտնվող «Source» կոճակին սեղմելով: Եկեք տեղադրենք մի նկար և նայենք «Source»-ը:

Կուրսորը դնում ենք այնտեղ, որտեղ ցանկանում եք տեղադրել պատկերը, սեղմում ենք գործիքի վրա:

Բացվում է այսպիսի պատուհան.



Սեղմելով «Browse Server» կոճակի վրա բացվում է file manager-ը, որի աշխատանքը նկարագրել ենք վերևում:

Գտնում ենք այն պատկերը, որը ուզում ենք ընտրել և ընտրում ենք այն գործիքով.



Որից հետո «URL» դաշտում հայտնվում է հղում: Այն նկարի հղումը, որը ցանկանում եք տեղադրել էջում: «Alternative text»-դաշտում կարող եք տեղադրել նկարի համառոտ նկարագրությունը: «Width» դաշտում նշվում է պատկերի իրական լայնքը px-ներով (pixel-չափման միավոր է): «Height» դաշտում նշվում է նկարի բարձրությունը px-ներով: Դրանք կարող են փոփոխվել ձեր կողմից:

Ուշադրություն՝ քանի որ ժամանակակից կայքերը ունեն ադապտիվ դիզայն և փոփոխվող լայնք՝ տարբեր էկրանների համար, ապա տեղադրելով ֆիքսված չափս այդ չափսից փոքր էկրանների դեպքում այն չի տեղավորվի էկրանի մեջ և դուրս կմնա էկրանից: Այդ պատճառով խորհուրդ է տրվում տեղադրել «Width»-ը տոկոսներով՝ թվի կողքին դնելով «%»-ի նշան: Չմոռանաք հեռացնել «Height» դաշտի թիվը: Այլապես կաղավաղվի պատկերի համամասնությունը:

«Border» դաշտում գրված թիվը պատկերի շուրջը ստեղծում է եզրագիծ՝ նշված չափի հաստությամբ:

«HSpace» և «VSpace» պատկերի շուրջը ստեղծում է հորիզոնական և ուղղահայաց ուղղություններով լուսանցք, հեռավորություն:

«Alignment»-ը տալիս է պատկերի լողացող դասավորություն տեքստի նկատմամբ՝ դեպի աջ կամ դեպի ձախ: Կարող եք փորձել և տեսնել արդյունքը «Preview» պատուհանում:

«Link» ներդիրում առկա «URL» դաշտի և «Browse Server» կոճակի օգնությամբ կարող ենք մեր ընտրած պատկերի վրա հղում դնել դեպի file manager-ի որևիցե ֆայլ: Օրինակ կարող եք ձեր ընտրած պատկերի համար դնել հղում դեպի այդ նույն պատկերը, որի վրա սեղմելիս կարող եք տեսնել նույն պատկերը ամբողջ չափով:

«Target» դաշտի վայր ընկնող ցուցակից ընտրելով «New Window (_blank)» տարբերակը, browser-ը այդ հղումը կբացի ոչ թե նույն էջի մեջ, այլ նոր ներդիրի մեջ:



«Upload» ներդիրում կարող եք ֆայլ ներբեռնել սերվեր իսկ «Advanced» ներդիրում առկա դաշտերի միջոցով կարող եք լրացուցիչ ատրիբուտներ տալ պատկերի tag-ին:

Հիմա տեսնենք, թե ինչ է նշանակում նկարի tag-ը:

Ահա թե ինչ ստացվեց Ok կոճակը սեղմելուց հետո.



Սեղմելով Source կոճակի վրա կտեսնենք այսպիսի կոդ.



<> -երը հենց տեգերն են HTML-ի միավորները, որոնցից բաղկացաց են վեբ էջերը: Պատկերի տեգը այսպիսին է՝ <img src=”նկարի հղումը”>

Ահա տեքստն ու պատկերը միասին.



Որտեղ երևում են և լուսանցքները և դեպի ձախ լողացող դասավորությունը տեքստի նկատմամբ: Դրանք միշտ կարող եք խմբագրել նկարի վրա doube click անելով:



Անցնենք առաջ և նայենք մյուս դաշտերը:

- «Մենյուի հղում*»

Ընտրում ենք այն հղումը, որի համար պատրաստում ենք սույն էջը: Այսինքն այս էջին վերագրում ենք հղում: Ինչ հղում պետք է բացել, որպեսզի այս էջը բացվի: Այս դաշտը վայր ընկնող ցուցակ է հղումներով, որոնք

խմբագրվում են «Կայքի մենյու» բաժնից: Դրան կանդրադառնանք քիչ ավելի ուշ: Դաշտի նկարագրության անվանման մեջ «*» սիմվոլը նշանակում է, որ այդ դաշտը պարտադիր է լրացման համար:

- «Վերնագիր»

Այն ուղղակի ինֆորմացիոն էջի վերնագիրն է՝ կարելի է և չգրել: Այդ դեպքում այն էջը, որի վերնագիրը չի նշվել ցուցադրվում է այնպես ինչպես home cat-ի դեպքում է.

Դա կարող է թելադրված լինել դիզայնով:



- «Համառոտ նկարագրություն»

Այն էջի համառոտ նկարագրությունն է, որը էջում չի երևում, այլ երևում է կոդում որպես meta tag: Հիշում եք այդ մասին խոսել ենք, երբ նկարագրում էի «Հիմնական պատկեր» դաշտը:

- «Բանալի բառեր»

Այն կրկին էջում չերևացող ինֆորմացիա է, որը իրենից ներկայացնում է էջի բովանդակության նկարագրությունը բառերով՝ տարանջատված ստորակետներով: Սա ևս meta tag է: Այն օգտագործում են ռոբոտները (Google, Yandex, Bing և այլն) երբ ինդեքսավորում են կայքը:

Երբ ստեղծվող էջի բոլոր դաշտերը լրացված են, սեղմում ենք պահպանել կոճակը և էջը պահպանվում է: Առանց պահպանելու էջը փակելու համար պետք է սեղմել կոճակը:

Նորաստեղծ էջը արդեն կարելի է գտնել էջերի ցուցակում և խմբագրել: Սեղմելով խմբագրել կոճակը կբացվի նույնատիպ ինտերֆեյս, որտեղ դաշտերում կգտնեք այն ինֆորմացիան, որը մուտքագրել էիք մինչև պահպանելը: Հիմա դուք կարող եք փոփոխել նախկինում մուտքագրած ինֆորմացիան: Փոփոխությունները պահպանելուց հետո անմիջապես կհայտնվեն կայքում:

Այստեղ կտեսնեք երկուսի փոխարեն 4 կոճակ:

Առաջինը պահպանում է, սակայն էջը չի փակում: Երկրորդը՝ պահպանում և փակում է էջը՝ վերադառնալով ինֆորմացիոն էջերի ցուցակին, կարող եք օգտագործել այն ժամանակ, երբ վերջացրել եք էջի խմբագրումը: Երրորդը փակում է էջը առանց պահպանելու: Չորրորդը ձեզ տեղափոխում է նոր մուտքի ստեղծման էջ՝ նույնական է «Ավելացնել նոր ինֆորմացիոն էջ» կոճակին:

Կայքի մենյու

Ընդհանուր առմամբ ինտերնետը դա հղումների և այդ հղումներով բացվող էջերի խումբ է: Այն շատ կարևոր բաժին է կայքում: Մինչև համակարգի կառավարման ինտերֆեյսին անդրադառնալը ուշադրություն դարձնենք կայքում եղած հղումների կառուցվածքին: Հղումները պարունակում են պարամետրեր, որոնք իրենցից ներկայացնում են հրամաններ CMS-ին: Արդյունքում CMS-ը ստանում է հրահանգ, թե որ էջը ցուցադրի, որ լեզվով, քանի արդյունք ցույց տա, ֆիլտրի արդյունքները թե ոչ և այլն:

Այդ պատճառով էլ կարևոր է լավ հասկանալ, թե ինչպես են աշխատում կայքում հղումները: Հղումները կարող են լինել հետևյալ տեսքի.

1. https://www.website.am/am/pages/index/Մեր-մասին/
2. https://www.website.am/2/am/pages/index/Նորություններ/
3. https://www.website.am/am/pages/index/Our-history/
4. https://www.website.am/am/shop/index/
5. https://www.website.am/am/shop/view/456/
6. https://www.website.am/am/catalogue/index/electronics_samsung_notebooks_touchscreen_12ram_256hdd/

Պարամետրերը միմյանցից առանձնանում են «/» սիմվոլով: Օրինակ առաջին հղման դեպքում ունենք.

am – կանխորոշում է բացվող բաժնի լեզուն: Կարող է լինել am, ru, en և այլն,

pages – Controller-ն է և կանխորոշում է այն բաժինը, որ պետք է բացվի,

index – Model-ն է և կանխորոշում է այն ֆունկցիան, որը պետք է աշխատի տվյալ Controller-ի համար,

Մեր-մասին – Պարամետր է, որով հարցում է կատարվում դեպի տվյալների բազա և որոնվելով և գտնվելով աղյուսակից համապատասխան տողը, որը պարունակում է այդ ինֆորմացիան վերադարձվում է մեզ:

Երկրորդում լեզվի պարամետրից առաջ ունենք նաև թիվ՝ 2: Դա էջի համարն է, որը լրացուցիչ ինֆորմացիա է տալիս, թե որ էջը պետք է բացել՝ այն դեպքում եթե որոնման արդյունքները շատ են:

Երրորդում չնայածս լեզուն հայերեն է ընտրված, սակայն պարամետրը անգլերեն է գրված: Իրականում դրանք միմյանց հետ կապված չեն և պարամետրի դաշտում կարելի է գրել ինչ լեզվով ուզեք:

Չորրորդում ունենք ինտերնետ խանութի գլխավոր էջի հղում, որը չունի ֆիլտրման պարամետրեր:

Հինգերորդում ունենք ինտերնետ խանութի կոնկրետ ապրանքի ներկայացման էջ: Պարամետրի մասի թիվը դա տվյալների բազայում այդ ապրանքի ներկայացման ունիկալ իդենտիֆիկատորի համարն է:

Վեցերորդում ունենք կատալոգի գլխավոր էջի հղում ֆիլտրերով: Որպես պարամետր ունենք այսպիսի «հավաքական պարամետր».

electronics_samsung_notebooks_touchscreen_12gb

«_» սիմվոլի դերը պարամետրերը զուտ առանձնացնելն է: Առանձնացնելուց հետո կստանանք 5 այսպես կոչված «ենթապարամետրեր»: Սակայն հետագայում ևս մենք դրանց կանվանենք պարամետրեր: Եկեք նրանց տանք անուններ:

A պարամետր – electronics

B պարամետր – samsung

C պարամետր – notebooks

D պարամետր – touchscreen

E պարամետր – 12ram

F պարամետր – 256hdd

Իրականում պարամետրերի ամբողջ կազմը կարելի է ներկայացնել այսպես.

A_B_C_D_E_F_G_H

Նույն սկզբունքով հոման մեջ կարելի է ավելացնել G և H պարամետրեր: Մեր օրինակով նշանակում է, որ մենք ուզում ենք ողջ ապրանքատեսականու միջից ընտրենք այն ապրանքները, որոնք իրենցից ներկայացնում են էլեկտրոնիկա, ապրանքանիշը սամսունգ է, ապրանքը նոութբուք է, էկրանը սենսորային է և ունի 12 գբ օպերատիվ և 256 գբ հիմնական հիշողություն:

Մենք կարող ենք ստանալ պարամետրերի այլ կոմբինացիա: Օրինակ եկեք որոնենք ապրանք, որի բրենդը dell է և touchscreen է: Այսինքն առկա են միայն B և D պարամետրերը, մյուսները դատարկ են: Այսինքն մեր հղումը կունենա հետևյալ տեսքը.

https://www.website.am/am/catalogue/index/_dell_ _touchscreen/

Այս դեպքում որոնման արդյունքներում կլինեն ոչ միայն նոութբուքեր, այլ ասենք նաև Dell-ի touch screen մոնիտորներ՝ քանի որ մենք չենք նշել որոնվող ապրանքի տեսակը notebook:

Վերջին պարամետրից հետո դատարկ պարամետրերը կարող ենք բաց թողնել, բայց մինչև վերջինները ոչ:

Այսինքն եթե գրենք այսպես.

https://www.website.am/am/catalogue/index/dell_ _touchscreen/

Ապա ծրագիրը կընդունի dell-ը որպես A պարամետր, քանի որ առաջինը dell-ն է: Այն պարամետրերի դասավորությունը սկսում է սկզբից: Քանի որ մենք ոչ մի ինֆորմացիա չենք տվել, որ Dell-ը դա A-ն չէ այլ B-ն, ապա նա պարամետրերը առանձնացնում է այսպես՝ A_B_C_D_E_F_G_H

Երբ բոլոր պարամետրերը դատարկ են ուղղակի ոչինչ չենք գրում.

https://www.website.am/am/catalogue/index/

և ոչ թե այսպես.

https://www.website.am/am/catalogue/index/_ /

Հասկանալի է, որ եթե որոնում ենք այդպիսի պարամետրերով ապրանք, ապա այդ պարամետրերը պիտի վերագրենք տվյալ ապրանքին: Դրա մասին կխոսենք քիչ ավելի ուշ:

Ավարտենք մենյուի կառավարման բաժինը: Երբ մուտք ենք գործում Կայքի մենյու, տեսնում ենք գլխավոր էջը.



Ինտերֆեյսը ծանոթ է մեզ ինֆորմացիոն էջերի կառավարումից: Վերևի աջ մասը կրկին վայր ընկնող ցուցակ է, որը ֆիլտրում է այս անգամ մենյուի տարատեսակները՝ եթե այդպիսիք կան: Կայքը կարող է ունենալ մեկից ավելի մենյուներ:

Տողերով ներկայացված են մենյուի կետերը: Փոքրիկ քառակուսիները ցույց են տալիս մենյուի կետերի հիերարխիան՝ այսինքն թե որ կետը որ կետի ենթակետն է:

Մեկ կետ ունեցող մենյուի կետերը առաջին մակարդակի կետեր են օրինակ՝ Բլոգ, Գլխավոր, Լուծումներ, Ապրանքներ: Եթե նկատեցիք բոլոր կետերի դիմաց կան ID-ներ, դրանք ունիկալ են՝ 416, 266, 420, 447, 471 և այլն: Անվանումների վերևի անկյունում նույնպես թվեր կան՝ 0, 420, 447, 420: Դրանք ցույց են տալիս իրենց ծնողական կետին պատկանելիությունը (ID-ները): Առաջին մակարդակի կետերը ծնողներ չունեն, այդ պատճառով 0-ներ են:

Օրինակ «Հյուրանոցներ» կետի վերևում գրված 447 թիվը ցույց է տալիս, որ այն պատկանում է մենյուի այն կետին, որի ID-ն 447 է՝ այսինքն «EcoStruxure»-ին: Վերջինիս 420 թիվը ցույց է տալիս, որ այն պատրակում է «Լուծումներ» կետին: «Լուծումներ» կետը առաջին մակարդակի կետ է:

Բոլոր կետերը կարող ենք «drag and drop» եղանակով տեղափոխել և ստանալ կանոնակարգված հիերարխիա, որը վիզուալ առումով հարմար է և հստակ ցույց կտա թե որ կետը որ կետի ենթակետն է: Կետերի տեղափոխման այս եղանակով փոփոխվում է նաև կայքում մենյուի կետերի դասավորությունը: Դա շատ կարևոր է երբ ունենք բազմաշերտ մենյուի կառուցվածք: Ինչ դասավորություն ունենք ադմին համակարգում, նույնը ունենք նաև կայքում:

Սեղմելով «Ավելացնել մենյուի նոր կետ» կոճակի վրա բացվում է այս ինտերֆեյսը.



«Առկա մենյուի կետերը» դաշտը իրենից ներկայացնում է վայր ընկնող ցուցակ, որտեղ առկա են բոլոր մենյուի կետերը: Ընտրելով որևիցե կետ դուք նոր ավելացվող մենյուի կետը ավելացնում եք որպես այդ ընտրված կետի ենթակետ: Եթե ոչինչ չեք ընտրում, ապա ավելացվող կետը դառնում է առաջին մակարդակի կետ:

«Ստեղծել նաև էջը» դաշտը նշելիս, համակարգը ստեղծում է համանուն էջ ինֆորմացիոն էջերի մեջ: Այդ էջը այլևս պետք չէ ստեղծել: Հիշում եք երբ նոր էջ էիք ստեղծում գրված էր.

- «Մենյուի հղում*»

Ընտրում ենք այն հղումը, որի համար պատրաստում ենք սույն էջը: Այսինքն այս էջին վերագրում ենք հղում՝ ինչ հղում պետք է բացել, որպեսզի այս էջը բացվի: Այն վայր ընկնող ցուցակ է հղումներով, որոնք խմբագրվում են «Կայքի մենյու» բաժնից: Դրան կանդրադառնանք քիչ հետո: Դաշտի նկարագրության անվանման մեջ «*» սիմվոլը նշանակում է, որ այդ դաշտը պարտադիր է լրացման համար:

Այս վայր ընկնող ցուցակի մեջ հայտնվում են վերը նշված մենյուի բոլոր կետերը: Եվ դուք ընտրելով որևիցե կետ, դրա համար ստեղծում եք այդ հղման համար էջ՝ բովանդակություն:

«Մենյուի կետի ID» դաշտը տալիս է հնարավորություն ստեղծել տարբեր մենյուներ միևնույն համակարգի օգնությամբ: Վայր ընկնող ցուցակ է, որի տարբերակների մեջ կարելի է ավելացնել նոր տարբերակ և ընտրելով այն ստեղծել նոր մենյու: Տարբերակները ավելացվում են «Կատեգորիաների կառավարում» ենթահամակարգից, որի մասին կխոսենք ավելի ուշ:

«Մենյուի կետի Class» դաշտը օգտագործվում է, երբ ուզում ենք տվյալ մենյուի կետը առանձնացնել՝ տալով նրան այլ դիզայն կամ այլ ֆունկցիոնալ: Դա հազվադեպ օգտագործվող դաշտ է: Առավել հաճախ օգտագործվում է ծրագրավորողների կամ դիզայների կողմից:

«Թաքցնել մենյուի կետը» դաշտը նշելիս այն այլևս չի հայտնվում վերոնշյալ «Մենյուի հղում*» դաշտի ցուցակում: Երբեմն, մեծածավալ մենյուի կետերի պարագայում այդ ցուցակը մեծ է, լինում՝ այնինչ դրանցից շատերը ուղղակի չեն օգտագործվում: Այդ պատճառով էլ այն ուղղակի հանում ենք այդ ցուցակից: Մենյուի կետերի ցուցակի էջում այն կետերը, որոնց համար կիրառված է այն ստանում են (H) մակնշումը:

«Վերնագիր կետ» Լինում են դեպքեր երբ ուզում ենք ունենալ մենյուի կետ, սակայն չենք ուզում, որ այն հայտնվի մենյուի մեջ: Այդպիսի կետերին անվանում ենք «Վերնագիր կետ»: CMS-ը վերլուծելով կայքի ընթացիկ հղումը գտնում է նրա համար մենյուի կետի ավելացման ժամանակ մուտքագրած վերնագիրը և դա օգտագործում են տվյալ էջին վերնագիր տալու համար: Դա շատ հարմար է: Բացի այդ ինֆորմացիոն էջ ստեղծելիս համակարգը մենյուի ցուցակից է վերցնում այն պարամետրը (էջի իդենտիֆիկատորը, հիշում եք օրինակ՝ /am/pages/index/**Մեր-մասին**/), որի միջոցով պատրաստում է էջը: Այս դեպքում մենյուի կետերի ցուցակում ավելացված նոր կետը ստանում է (T) մակնշումը՝ օրինակ Գլխավոր կամ Բլոգ կետերը:

Անցնենք առաջ և անդրադառնանք նաև առկա մյուս ներդիրներին: Նշել եմ, որ «Հայերեն», «Ռուսերեն» և «Անգլերեն»-ի պարագայում դաշտերը նույնն են և միմյանցից տարբերվում են միայն մուտքագրվող բովանդակության լեզվով: Այդ պատճառով էլ կանդրադառնանք միայն «Հայերեն»-ին:

Սեղմելով «Ավելացնել մենյուի նոր կետ» հայտնվում ենք այստեղ.



Ցանկացած տեքստային հղում ստեղծելու համար մեզ անհրաժեշտ է տեքստ՝ հղման անվանումը և հղման հասցեն՝ այսինքն թե որտեղ է այն տանում: Հղման անվանումը պետք է գրել յուրաքանչյուր լեզվի համար իրենը: Նախընտրելի է շատ երկար չլինի, որպեսզի կայքի մենյուի մեջ երևալիս գեղեցիկ լինի:

«Մենյուի կետի հղում» դաշտը լրացնելիս պետք է հիշել սույն բաժնում նկարագրած կայքի հղումների ստեղծման առանձնահատկությունները: Օրինակ եթե մենք ուզում ենք ստեղծել ինֆորմացիոն էջ, որի անունը պետք է լինի «Մեր արժեքները», ապա «Մենյուի կետի հղում» դաշտում պետք է գրել այսպես.

/am/pages/index/Մեր-արժեքները/

կամ

/am/pages/index/Mer-arjeqnery/

կամ

/am/pages/index/Our-values/

Բացակների փոխարեն դնում ենք «-» սիմվոլը: Համակարգը ինքը կհուշի ձեզ և ձեր դրած բացակը կփոխարինի այդ սիմվոլով:

Մյուս ներդիրների դաշտերը լրացնելիս սկզբունքը նույնն է: Միայն պետք է հիշել, որ լեզվի «am» պարամետրը մյուս լեզուներում պետք է համապատասխանորեն փոխարինել «ru» և «en»-ով:

«Մենյուի կետի լրացուցիչ անվանում» դաշտը լրացուցիչ դաշտ է (optional):

Արդեն ասացինք, որ շատ էջերի վերնագրերը վերցվում են մենյուի կետի վերնագրից: Սակայն երբեմն պահանջվում է, որ դրանք լինեն տարբեր: Այսինքն եթե մենյուի կետի անվանումը «Կապ» է էջի մեջ գրվի օրինակ «Կապ մեզ հետ»: Այդ դեպքում եթե այդ դաշտում գրենք այլ տեքստ ապա էջի վերնագիրը կցուցադրի այդ տեքստը՝ նախապատվությունը տալով դրան:

Կոնֆիգուրացիայի կառավարում

Կոնֆիգուրացիայի կառավարում բաժնում կարելի է կանխորոշել կայքի հետ կապված որոշակի կարգաբերումներ:



«Կայքի կանխադրված լեզու»

Կայքի հիմնական լեզուն է: Կարող է լինել միայն այն լեզուներից, որոնք նախատեսվել են կայքի մշակման ժամանակ: Կարող են լինել «am», «ru», «en»:

«Կայքում ցուցադրվող արդյունքների քանակ»

Դա կայքում մուտքերի այն քանակն է, որից հետո մյուս արդյունքները բաժանվելու են էջերի:

«Ադմինի կանխադրված լեզու»

Ադմինի հիմնական լեզուն է, կարող են լինել «AM», «RU», «EN»:

«Ադմինում ցուցադրվող արդյունքների քանակ»

Դա ադմինում մուտքերի այն քանակն է, որից հետո մյուս արդյունքները բաժանվելու են էջերի:

«Կանխադրված վերահսկիչ»

Controller-ն է, որի մասին ասվել է «Կայքի մենյու» բաժնում: Կարելի է տեղադրել միայն կայքում առկա Controller-ներից: Օրինակ հետադարձ կապի դեպքում այն contacts է:

«Կանխադրված գործողություն»

Model-ն է, որի մասին ասվել է «Կայքի մենյու» բաժնում: Կարելի է տեղադրել միայն կայքում առկա Controller-ներից: Օրինակ հետադարձ կապի դեպքում այն index է:

«Կանխադրված հղում»

Պարամետրն է, որի մասին ասվել է «Կայքի մենյու» բաժնում: Օրինակ հետադարձ կապի դեպքում այն բացակայում է սակայն առկա է ինֆորմացիոն էջերի դեպքում՝ օրինակ Մեր-մասին, Controller՝ pages, Model՝ index:

Կոնֆիգուրացիային կառավարման բաժինը հազվադեպ է փոփոխվում և այդ իսկ պատճառով խորհուրդ չի տրվում փոփոխություններ կատարել:

Ինֆորմացիոն տարրեր

Ժամանակակից կայքերի նախագծման ժամանակ բավարար չի լինում ուղղակի տեքստեր և նկարներ տեղադրել՝ այնպես ինչպես արվում է ասենք word-ում: Դիզայնի ներկայացվող պահանջները օրեցօր ավելի են մեծանում և առաջանում է անհրաժեշտություն ստեղծել գործիքներ, որոնք միջոցով կարելի է հեշտությամբ իրականացնել արդեն իսկ նախագծված առանձին էլեմենտների տեղադրումը անմիջապես էջերում: Ինֆորմացիոն տարերը դուք կարող եք պատկերացնել որպես աղյուսներ, որոնցից կարելի է պատրաստել տարբեր շինություններ: Բոլոր աղյուսների արտադրության մեջ կան շատ ընդհանուր տարրեր՝ չնայած նրանք կարող են և մեկը մյուսից որոշակի տարբերվել:

Այդ պատճառով էլ մեր ինֆորմացիոն տարրերը՝ չնայած ամեն առանձին դեպքում կարող են այլ տվյալներ պարունակել, սակայն բոլորն էլ կարող են ունենալ վերնագիր, հղում, նկար/նկարներ, ֆայլեր, ընդհարձակ տեքստ, համառոտ տեքստ, ամսաթիվ իդենտիֆիկատոր և այլն: Օգտագործելով միևնույն ֆորման մենք պատրաստում ենք մեզ անհրաժեշտ տարրերը և հետո դրանք օգտագործում կոմպոնենտներ (inline module-ներ) պատրաստելու համար:

Դրա համար մենք պատրաստել ենք հատուկ կոնստրուկցիաներ, որոնք կարելի է ինտեգրել անմիջապես WYSIWYG դաշտում: Որպեսզի համակարգը կարողանա այդ կոնստրուկցիան տարբերակի սովորական տեքստից այն ունի որոշակի կառուցվածք և ֆորմատ:

Օրինակ.

{{GALLERY_gallery/pictures_}}

{{}} սիմվոլները օգտագործվել են, որպեսզի այդ գրվածքը տարբերվի սովորական տեքստից իր «անսովորությամբ»:

Դա ուղղակի պետք է հիշել:

Ներսում գրված է սա.

GALLERY_gallery/pictures_

Ինչպես «Կայքի մենյու» բաժնում ուսումնասիրած հղման պարամետրերի դեպքում այնպես էլ այստեղ «_» սիմվոլը ուղղակի առանձնացնում է պարամետրերը: Ունենում ենք GALLERY, gallery/pictures իսկ վերջին երրորդ պարամետրը այս դեպքում դատարկ է: Կարող է լինել և այսպես՝ {{GALM_gallery/pictures_4}}:

Առաջին պարամետրը՝ GALLERY կոնստրուկցիայի ֆունկցիայի անունն է, որին կանչում ենք: Երկրորդը արգումենտ է, որը փոխանցվելու է ֆունկցիային: Այս օրինակում մենք ունենք պատկերասրահի կոնստրուկցիա (այսուհետ կանվանենք դրանց inline module), որը կվերցնի file manager-ից նշված թղթապանակի մեջ առկա պատկերները և կներկայացնի այն գեղեցիկ պատկերասրահի ձևով՝ ապահովելով պատկերների ադապտիվությունն ու գեղեցիկ, մեծ ցուցադրման ֆունկցիոնալը: Այսինքն դրանք պատրաստի համակարգեր են, որոնք մենք այստեղ ուղղակի օգտագործում ենք: Փոխելով պատկերների թղթապանակի հասցեն կարող ենք ցուցադրել մեկ այլ պատկերասրահ: Ամբողջ ծրագրային ապահովումը մենք իրագործել ենք նախապես:

Այլ դեպքերում կարող ենք ցուցադրել օրինակ բացվող/փակվող հարց և պատասխան բաժին: Հարց է առաջանում որտեղ ենք մուտքագրում հարցն ու պատասխանը: Դրա համար նախատեսված է «Ինֆորմացիոն տարրեր» բաժինը: Այս բաժնի շնորհիվ մենք ստեղծում ենք խմբավորված ինֆորմացիոն միավորներ, որոնց օգտագործում են inline module-ները: Մենք կանչում ենք վերջիններիս մեր ցանկացած վայրում և ստանում գեղեցիկ և պատրաստի դիզայնի էլեմենտներ (պատրաստի բլոկներ):

Օրինակ Հարց և պատասխան բլոկի համար inline module-ն կարող է լինել այսպիսի տեսքի՝ {{ACCORDION_faq_}}

Ուշադրություն դարձրեք, որ առաջին պարամետրը միշտ գրվում է մեծատառերով՝ ACCORDION: Ինչու ACCORDION, որովհետև այդպիսի բացվող/փակվող կոնստրուկցիան վեբում անվանում են accordion: Ինֆորմացիոն տարրերը պահպանելուց հետո հավաքվում են մի մեծ աղյուսակի մեջ և օգտագործվում են այսպիսի inline-modul-ների կողմից: Սակայն ինչպես են inline modul-ները իմանում թե որոնք են իրենցը: Մեր օրինակում վերջիններիս կանչում ենք դրանց երկրորդ պարամետրով՝ «faq»: Դա նշանակում է, որ

այնտեղ տվյալների բազայում պահպանման ժամանակ նրանցից յուրաքանչյուրը ստանում է խմբի ID, որպեսզի երբ այդ ID-ով մենք նրանց կանչենք տվյալների բազան կարողանա որոնել նրանց ըստ այդ ID-ի: Փնտրի, գտնի և վերադարձնի inline modul-ին: Վերջինս էլ ձևավորի կոնստրուկցիան և ցուցադրի մեր ցանկացած տեղում:

Հիմա այս ամենը բացատրենք օրինակով: Մուտք գործելով տվյալ բաժին, տեսնում ենք մեզ ծանոթ ինտերֆեյս.



Աջ մասում գտնվող վայր ընկնող ցուցակում գտնվում են արդեն ստեղծված ինֆորմացիոն տարրերը խմբավորված: Այնպես որ երբ ընտրում եք խումբը ներքևում գտնվող ինֆորմացիոն տարրերի ցուցակը ֆիլտրվում է և մնում են միայն այդ խմբի մեջ մտնող ինֆորմացիոն տարրերը: Կայքում գտնվող բովանդակության մեջ այս բաժինը շատ մեծ կշիռ ունի: Բազմաթիվ հատվածների բովանդակության խմբագրումը իրականացվում է հենց այս բաժնից: Այնպես որ եթե չեք կարողանում գտնել այն բովանդակությունը, որը ուզում էիք խմբագրել, փնտրեք այստեղ: Եթե այստեղ ևս չեք գտնում նշանակում է այն պետք է խմբագրել ծրագրային կոդից, որը պետք է կատարվի մասնագետի կողմից: Ադմին համակարգի միջոցով փոփոխվում է այն բովանդակությունը, որը ենթակա է հաճախակի փոփոխման:

Ներքևում գտնվող ինֆորմացիոն տարրերի տողերը ունեն հերթականություն, որը կարելի է փոխել «drag and drop» եղանակով տեղափոխելով: Սեղմելով «Ավելացնել նոր ինֆորմացիոն տարր» կոճակը բացվում է հետևյալ ինտերֆեյսը.



Այս համակարգում մենք ունենք բազմաթիվ դաշտեր՝ այսպես կոչված «կյանքի բոլոր իրավիճակների համար»: Այսինքն ոչ բոլոր դաշտերն են միշտ օգտագործվում: Այս համակարգի նշատակն է լինել ունիվերսալ և ստեղծել մեզ անհրաժեշտ բազմապիսի ինֆորմացիա:

Անդրադառնանք դաշտերին.

«Կատեգորիա*»

Պարտադիր դաշտ է. Վայր ընկնող ցուցակից ընտրում ենք Այն խումբը, որի կազմում ուզում ենք ստեղծել տվյալ ինֆորմացիոն տարրը: Անմիջապես առաջանում է տրաբանական հարց՝ իսկ որտեղից են ավելանում այդ տարբերակները:

Սույն դաշտի վայրընկնող ցուցակի փոխարեն կարող էր լինել տեքստային դաշտ, որտեղ կարող էինք գրել կատեգորիա ասենք «slider»: Եվ յուրաքանչյուր անգամ երբ անհրաժեշտ լիներ ավելացնել ինֆորմացիոն տարր այդ խմբում, մենք պետք է այդ դաշտում գրեինք «slider»: Սակայն փորձը ցույց է տալիս, որ մարդիք

սխալվում են գրելով օրինակ «Slider» կամ «Slayder» և այլն: Այս դեպքում տվյալ ինֆորմացիոն էլեմենտը վերագրվում է լրիվ այլ խմբի և inline modul-ի կողմից կանչվելիս չի բերվում քանի որ տարբեր է:

Որպեսզի բացառվեն նմանօրինակ սխալները, ստեղծվել է մեկ այլ ենթահամակարգ, որը կոչվում է «Կատեգորիաների կառավարում»:

Հիշում եք վերևում մենք խոսում էինք սպասարկող ենթահամակարգերի մասին.



«Ավելացնել նոր կատեգորիա» կոճակը սեղմելով կհայտնվենք այստեղ.



Այստեղ մեզ անհրաժեշտ է լրացնել բոլոր պարտադիր դաշտերը: Կատեգորիան իրենից ներկայացնում է լատինատառ (նախընտրելի է փոքրատառերով՝ բացակների փոխարեն օգտագործելով «-» կամ «_» սիմվոլներ) տրամաբանական գրվածք: Օրինակ «slider», «our-advantages», «numbers» և այլն:

«Հայերեն», «Ռուսերեն» և «Անգլերեն» դաշտերում գրեք այդ կատեգորիայի նկարագրությունը համապատասխան լեզուներով՝ ինչպես դուք ավելի լավ կհիշեք: Այդ երևում է միայն ադմին համակարգում: Այնպես, որ երբ «Ինֆորմացիոն տարրեր» բաժնի վայր ընկնող ցուցակում տեսնեք հիշեք թե որ մեկն էր այն:

Օրինակ.



Ավելացնելուց հետո այն կարելի է օգտագործել:

Ուշադրություն. Նկատել եք երևի, որ «Կատեգորիաների կառավարում» բաժնում կան շատ կատեգորիաներ, որոնք ոչ բոլորն են ցուցադրվում ցուցակում: Օրինակ «Կայքի մենյու» և «Բլոգ» բաժինների «Կատեգորիա» դաշտի ցուցակներում: Պատճառը այն է, որ ի տարբերություն «Ինֆորմացիոն տարրերի» բաժնի, որը ունիվերսալ օգտագործման ենթահամակարգ է, վերոնշյալ համակարգերը առանձնահատուկ բնույթ ունեն և իմաստ ունի այդ ցուցակներում ցուցադրել միայն այն կատեգորիաները, որոնք առնչվում են նրանց հետ: Այսինքն մենյուի բաժնում միայն մենյուի կատեգորիաները, բլոգում միայն բլոգինը: Այդ պատճառովհամակարգը ճանաչում և այդ երկու բաժինների ցուցակներում ավելացնում է միայն այն կատեգորիաները, որոնք պարունակում են համապատասխանաբար «menu» և «blog» բառերը: Ինչպես օրինակ «menu-horizontal», «blog-news», «blog-videos»:

Անցնենք «Ինֆորմացիոն տարրեր» բաժնի մյուս դաշտերին:



Հրապարակել դաշտի նշելը կամ չնշելը ակտիվացնում կամ պասիվացնում է տվյալ ինֆորմացիոն տարրը: Այսինքն այն հայտնվում է կայքում կամ անհետանում է կայքից: Այն տարրերը որոնք անջատված են տարրերի ցուցակում նշվում են նշանով:

«Հիմնական պատկեր» դաշտը մեզ արդեն հայտնի է ինֆորմացիոն էջերի կառավարումից:

«Լրացուցիչ պատկերներ» դաշտը տարբերվում է «Հիմնական պատկեր» դաշտից նրանով, որ տալիս է հնարավորություն ընտրելու բազմաթիվ պատկերներ: Բացելով file manager-ը ընտրում ենք թղթապանակը, որից ուզում ենք ընտրել պատկերներ: Նշելով մի քանի օբյեկտ սեղմում ենք : Այնպես ինչպես ցույց է տրված նկարում.

«Կցել ֆայլ» դաշտը թույլ է տալիս տեղադրել ֆայլի հղում:

«Դասավորություն» դաշտը կարող է ընդունել 2 արժեք, ասենք աջ կամ ձախ, զույգ կամ կենտ և այլն: Հազվադեպ է օգտագործվում:

«Նույնացուցիչ» դաշտում որպես կանոն նշվում է որևէ իդենտիֆիկատոր, որով տվյալ ինֆորմացիոն տարրը տարբերվում է մյուսներից: Հազվադեպ է օգտագործվում:

«Ամսաթիվ դաշտը» օգտագործվում է ամիս-ամսաթիվ տեղադրելու համար.

Նորամուծություն է «Պարամետրեր դաշտը», որը տալիս է հնարավորություն ինֆորմացիոն տարրերը միավորել ըստ որոշակի A, B, C, D, E, F, G, H պարամետրերի, որոնք կառավարվում են «Պարամետրերի կառավարում» բաժնից: Այսինքն յուրաքանչյուր ինֆորմացիոն տարրի վերագրելով որևիցե պարամետր/ պարամետրեր (Միևնույն տիպի (ասենք A) պարամետրից կարելի է վերագրել նույնիսկ մի քանիսը) հնարավորություն է ստեղծվում խմբավորել և ֆիլտրել տարրերը ըստ այդ պարամետրերի: Ենթադրենք ունենք խնդիր կատարված աշխատանքները դասավորել ըստ կատեգորիաների:

Յուրաքանչյուր կատարված աշխատանք մուտքագրում ենք որպես ինֆորմացիոն տարր, իսկ վերագրելով համապատասխան պարամետրեր տալիս ենք հնարավորություն ֆիլտրել աշխատանքները: Այդպիսի համակարգը կարող է լայն կիրառություն ունենալ և լինել օգտակար:



Ներդիրների մեջ ունենք ընդարձակ բովանդակության համար դաշտ, վերնագիր, համառոտ տեքստ, հղման համար նախատեսված դաշտ և համառոտ տեքստային դաշտ:

Այս բոլոր դաշտերի անունները պայմանական են:

Յուրաքանչյուր լեզվի համար տեղադրում ենք իր տարբերակը:

Երբ ձեզ մոտ առաջանում է անհրաժեշտություն լրացնելու այս դաշտերը, դուք բացեք նույն խմբի մեջ մտնող, մեր կողմից լրացված մեկ այլ ինֆորմացիոն տարր խմբագրման ռեժիմում և նայելով ինչպես է այն լրացված լրացնում եք նորը: Կամ օգտագործելով կրկնօրինակել կոճակը ստեղծում եք նույնի կրկնօրինակը և վրան կատարում փոփոխությունները: Ինքնին պարզ է նաև, թե որքան է հեշտանում նաև ինֆորմացիոն տարրը մի կատեգորիայից տեղափոխել մեկ այլ կատեգորիա:

Բլոգ

Կայքում բլոգի դերը հանգում է հաճախ թարմացվող տեղեկատվության ստեղծմանը: Կայքում տեղադրված կազմակերպության ծառայությունների և ապրանքատեսականու մասին տեղեկատվությունը չեք կարող հաճախակի թարմացնել: Այն որպես կանոն ստատիկ ինֆորմացիա է: Սակայն շատ կարևոր է, որ կայքը դինամիկ լինի իր բովանդակությամբ, որպեսզի հետաքրքրություն ներկայացնի որոնողական համակարգերի համար:

Այդ նպատակով կայքերը ունենում են բլոգի բաժին, որտեղ կարելի է ներկայացնել բազմատեսակ տեղեկատվություն՝ նորություններ, հոդվածներ և այլն: Մեր CMS-ը ևս ունի բլոգի կառավարման ստանդարտ համակարգ:

Մուտք գործելով տվյալ բաժին տեսնում ենք սա.



Վերևի աջ վայր ընկնող ցուցակից կարող ենք ֆիլտրել բլոգի մեջ մտնող նյութերի տեսակների տարբերակները: Օրինակ կարող են լինել՝ «Բլոգ նորություններ», «Բլոգ վիդեո» և այլն : Ինչպես հիշում ենք

դրանք ավելացնում ենք «Կատեգորիաների կառավարում» բաժնից և ինչպես «Ինֆորմացիոն տարրեր»-ի, «Կայքի մենյու»-ի կառավարման ժամանակ այնպես էլ «Բլոգ»-ի կառավարման ժամանակ ընտրում ենք այն, որպես կատեգորիա:Կատեգորիայի անկյունում ցուցադրվում է դիտումների քանակը:

Սեղմելով «Ավելացնել նոր գրառում» կոճակը հայտնվում ենք այստեղ.



Այս դաշտերը մեծ մասամբ ծանոթ են մեզ.

«Հրապարակել»

Այս դաշտի միջոցով կարելի է տվյալ գրառումը հրապարակել կամ թաքցնել:

«Հիմնական»

Որոշ դեպքերում կայքում բլոգի դիզայնի առանձնահատկություններից ելնելով կարող է պատահել այնպես, որ մի գրառումը պետք է լինում ցուցադրել մեծ չափերով և առանձնահատուկ կարգավիճակով: Այդ պարագայում մենք նշում ենք տվյալ գրառումը սույն դաշտի օգնությամբ:

«Հիմնական պատկեր»

Այս դաշտի օգնությամբ պահպանում ենք գրառման գլխավոր պատկերը, որը երևում է ինչպես գրառման ընդհանուր էջում այնպես էլ բուն գրառման էջում:

«Ամսաթիվ»

Այս դաշտի օգնությամբ մուտքագրում ենք տվյալ գրառման ստեղծման ամսաթիվը՝ ընտրելով օրացույցից: Բլոգի գրառումները դասավորվում են ըստ ամսաթվի նվազման կարգով: Այսինքն վերջին ավելացված գրառումը ցուցադրվում է ամենասկզբում:

Տեսնենք առաջին ներդիրը՝ «Հայերեն».



«Բովանդակություն» դաշտում գրում ենք գրառման հիմնական բովանդակությունը:

«Վերնագիր» դաշտում գրում ենք գրառման վերնագիրը:

«Համառոտ» դաշտում գրում ենք գրառման մասին համառոտ տեղեկատվություն

«Թեգեր» դաշտում ինչպես «Ինֆորմացիոն էջեր» բաժնում գրում էինք բանալի բառերը՝ առանձնացված ստորակետներով, այնպես էլ այստեղ գրում ենք գրառմանը վերաբերվող հիմնական բառերը առանձնացված ստորակետներով:

«UURL» դաշտի անհրաժեշտությունը ավելացվել է ելնելով SEO-ի պահանջներից: Բանը նրանումն է, որ բլոգի գրառման էջը ունի օրինակ այսպիսի տեսք.

https://www.website.am/en/blog/post/570/, որտեղ վերջին թիվը դա տվյալների բազայի աղյուսակում տվյալ գրառման հերթական համարն է:

Կայքերի առաջխաղացման մասնագետները ցանկանում են, որ դրա փոխարեն տեղադրվի որևիցե տեքստ, որը կնկարագրի գրառումը: Այդպիսի տեքստ կարող է լինել ավելի ընդհարձակ վերնագիրը օրինակ: Սակայն եթե գրառման հերթական համարի ունիկալության մասով կարող ենք վստահ լինել, ապա օգտագործողի մուտքագրած տեքստի մասով չենք կարող:

Այդ դաշտում գրված տեքսի ունիկալությունը շատ կարևոր է՝ այլապես համակարգը կոնկրետ հարցումով չի կարող բերել կոնկրետ արդյունք և կառաջանա խառնաշփոթ: Այդ պատճառով էլ այդ տեքստը մուտքագրելիս անհրաժեշտություն է առաջանում ստուգել այդ տեքստի ունիկալութունը՝ ուղղակի սեղմելով դաշտի ներքևի կոճակին:

Տեքստին ներկայացվող պահանջներ կան: Տեքստի բացակների փոխարեն դնել «-» կամ «_» սիմվոլները: Որոշ մասնագետներ խորհուրդ են տալիս տեքստերը երեք լեզուներով էլ գրել, իսկ մյուսները առաջարկում են գրել միտքը իրենց լեզուներով սիմվոլները լատինատառ (рус. «транслитерация» կրճատ «транслит»):

Եթե մուտքագրած տեքստը ունիկալ է ապա կստանաք համապատասխան հաղորդագրություն՝ հակառակ տեպքում ուղղակի չեք կարող պահպանել այդ գրառումը: Եթե ձեզ համար սկզբունքային չէ տեքստի առկայությունը այդ դաշտում, ապա կարող եք մուտքագրել բլոգի գրառումներից ամենամեծից մեկ նիշ մեծ թիվ՝ պայմանով որ վերջին գրառումներից ոչինչ չէիք հեռացրել:

Համաձայն եմ, որ մի քիչ խուճուճ է ստացվում, սակայն այդ ֆունկցիոնալը գալիս է ժամանակի պահանջներից իսկ մենք ուղղակի իրագործել ենք այն:

Կատալոգ

Կատալոգ բաժինը նախատեսված է ապրանքների կամ ծառայությունների կանոնակարգված ներկայացման համար: Կա հնարավորություն առաջարկները բաժանել կատեգորիաների, ներկայացնել գներ, տալ լրացուցիչ տեղեկատվություն ապրանքի առկայության և նորույթ լինելու մասին, ապրանքը ներկայացնել մեկից ավելի պատկերներով:

Ներքևում պատկերված է «Կատալոգ» բաժնի գլխավոր էջը ադմին համակարգում:

Այստեղ կարելի է փոխել ապրանքների դասավորությունը մեկը մյուսի նկատմամբ «drag and drop» եղանակով:



Վերևի աջ անկյունի վայր ընկնող ցուցակի օգնությամբ կարելի է ֆիլտրել ապրանքները ըստ տարբեր պարամետրերի: Այդ պարամետրերի մասին խոսել ենք «Կայքի մենյու» բաժնում:



Սեղմելով «Ավելացնել նոր առաջարկ» կոսճակին մեր առջև բացվում է այսպիսի ինտերֆեյս.



Այստեղից «Հիմնական պատկեր» դաշտի օգնությամբ ընտրում ենք առաջարկի ներկայացման հիմնական պատկերը:

Անցնելով «Պարամետրեր» ներդիրը կտեսնենք հետևյալ ինտերֆեյսը.



Երբ «Մենյուի կառավարում» բաժնում խոսում էինք պարամետրերով որոնման մասին՝ այսինքն այնպիսի հղում ստեղծելու մասին, որի օգնությամբ կարող ենք տվյալների բազայից կանչել մեզ անհրաժեշտ առաջարկը, նշվեց, որ դրա համար անհրաժեշտ է, որ այդ առաջարկին վերագրենք այդ պարամետրերը: Նկարում պատկերված են այդ A, B, C, D, E, F, G, H պարամետրերի ընտրման դաշտերը:

Ի դեպ կարելի է ընտրել մի միևնույն պարամետրերից միաժամանակ մի քանիսը՝ տվյալ առաջարկի համար: Դրա համար անհրաժեշտ է սեղմած պահելով համակարգչի «ctrl» կոճակը նշել անհրաժեշտ տարբերակները: Դա պետք է անել բոլոր պարամետրերի համար:

Տարբերակները փոփոխելու համար անհրաժեշտ է կրկին սեղմած պահելով համակարգչի «ctrl» կոճակը նշել անհրաժեշտ տարբերակները: Նշած տարբերակը չնշելու համար անհրաժեշտ է կրկին սեղմել տվյալ տարբերակի վրա: Նշված տարբերակները տարբերվում են կապույտ գույնով:

Այստեղից առաջանում է տրամաբանական հարց (նույն հարցն առաջացել էր «Ինֆորմացիոն տարրեր» բաժնի կառավարման ժամանակ) ինչպե՞ս համալրել այդ պարամետրերի տարբերակները:

Այդ նպատակով ստեղծվել է «Պարամետրերի կառավարում» բաժինը, որի օգնությամբ ընտրելով համապատասխան պարամետրը, նրա համար կարող ենք ստեղծել պարամետրի արժեք:



«Պարամետրերի արժեք» դաշտում գրվածքին ներկայացվում է նույնատիպ պահանջները ինչ որ «Կատեգորիայի արժեք» դաշտին: Միայն թե այս դեպքում չի կարելի օգտագործել «_» սիմվոլ, քանի որ այդ սիմվոլը հանդիսանում է նաև պարամետրերի համար սահմանազատիչ (разделитель): Դրա օգտագործման դեպքում տեղի կունենա պարամետրերի աղավաղում:

Պահանջն է՝ լատինատառ (նախընտրելի է փոքրատառերով՝ բացակների փոխարեն օգտագործելով «-» սիմվոլ) տրամաբանական գրվածք: Ինչպես ասենք «Կայքի մենյու» բաժնում նկարագրված օրինակում՝

https://www.website.am/am/catalogue/index/electronics_samsung_notebooks_touchscreen_12ram_256hdd/:

Այնտեղ, ինչպես հիշում եք, A պարամետրի արժեքը «electronics» է, B պարամետրի արժեքը՝ «samsung» է և այլն: Համապատասխանաբար A պարամետրի անվանումը հայերեն, ռուսերեն և անգլերեն կարելի է գրել Էլեկրտոնիկա, Электроника, Electronics իսկ B պարամետրի համար Ապրանքանիշ, Бренд, Brand: Այսինքն A պարամետրը նկարագրում է ապրանքների խումբ իսկ B պարամետրը արտադրող:

Մեկ այլ տեսակ ապրանքների համար կարող եք գրել A պարամետրի արժեքը ասենք clothes իսկ B պարամետրի արժեքը ասենք boss և այլն: Կարող եք ըստ անհրաժեշտության ավելացնել նաև C, D, E և այլ պարամետրերը: A-ի տակ ավելացված բոլոր պարամետրերը ցուցադրվելու են A դաշտում իսկ B-ինը B դաշտում:



Շարունակենք «Կատալոգ» համակարգի «Պարամետրեր» ներդիրի դաշտերի ուսումնասիրությունը:

«Նորու՞յթ է» և «Առկա՞ է» դաշտերը ունեն «Այո» կամ «Ոչ» տարբերակները: Դրանցից «Այո» տարբերակի ընտրության դեպքում առաջարկի ներկայացման մեջ ավելանում են համապատասխանաբար «Նորույթ» և «Առկա չէ» տեղեկատվական գրվածքները:

«Առաջարկի նկարներ» դաշտը նույնական է «Ինֆորմացիոն տարրեր» բաժնի «Լրացուցիչ պատկերներ» դաշտին և աշխատում է նույն կերպ: Այսինքն դրա նպատակն է պահպանել տվյալ առաջարկի համար մեկից ավելի պատկերներ:

Որոշ դեպքերում «Կատալոգ» բաժնի «Պարամետրեր» ներդիրում առկա են լինում լրացուցիչ դաշտեր ինչպես օրինակ.

«Ապրանքի գին» դաշտը, որտեղ նշվում է ապրանքի արժեքը դրամով:

«Ապրանքի գինը մինչև զեղչը» դաշտը, որտեղ նշվում է ապրանքի արժեքը դրամով: Այսինքն այդ դաշտի լրացման պարագայում «Ապրանքի գին» դաշտում լրացված գինը դառնում է արդեն զեղչված գին: Երբ լրացնում ենք այդ դաշտը կայքում տվյալ առաջարկի ցուցադրման դեպքում նշվում է «Ապրանքի գինը մինչև զեղչը» դաշտի գինը վրան գիծ քաշած իսկ դրա դիմաց ընթացիկ՝ այսինքն զեղչված արժեքը՝ այսինքն «Ապրանքի գին» դաշտի արժեքը:

Քանի որ ցանկացած զեղչ գործում է որոշակի ժամանակ միայն, ապա այդ դեպքում առաջանում է անհրաժեշտություն մուտքագրել նաև տվյալ զեղչի գործողության վերջնաժամկետը: Այդ դաշտը այդպես էլ

կոչվում է՝ «Ձեղչի ավարտման ամսաթիվ»: Այն լրացնելու համար դաշտի մեջ «click» անելից բացվում է օրացույց, որտեղից էլ ընտրում ենք վերջնաժամկետի ամսաթիվը:

Անցնելով «Հայերեն» ներդիրին տեսնում ենք մեզ արդեն ծանոթ այսպիսի ինտերֆեյս.



Այստեղ «Առաջարկի նկարագրություն» դաշտում գրում ենք ընդհարձակ նկարագրություն:

«Առաջարկի անվանում» դաշտում գրում ենք ապրանքի կամ ծառայության անվանումը: Այն համարվում է պարտադիր դաշտ:

«Համառոտ նկարագրություն» դաշտում մուտքագրում ենք ապրանքի կամ ծառայության համառոտ նկարագրությունը:

«Բանալի բառեր» դաշտում մուտքագրում ենք առաջարկին առնչվող բանալի բառերը՝ առանձնացված ստորակետներով:

Մյուս լեզուների ներդիրները լրացնում ենք նույն սկզբունքով:

Ինտերնետ խանութ

«Ինտերնետ խանութ» բաժնի ինտերֆեյսը շատ նման է «Կատալոգ» բաժնի ինտերֆեյսին: Փաստացի «Ինտերնետ խանութ»-ը «Կատալոգ»-ի ավելի կատարելագործված տարատեսակն է:

Կայք-կատալոգի պարագայում մեր խնդիրն է կայքում հնարավորինս մատչելի և հարմարավետ ներկայացնենք առաջարկները: Կատալոգում գները կարող են և ներկայացված չլինել քանի որ շատ տնտեսվարողներ խուսափում են դրանից:

Ինտերնետ խանութների պարագայում դա պարտադիր բնույթ է կրում և առանց գների այն չի կարող աշխատել: Այս դեպքում լրացուցիչ ավելանում է կոճակ, որի օգնությամբ մեզ անհրաժեշտ քանակի ապրանք կարող ենք ավելացնել զամբյուղի մեջ:

Մյուս բոլոր դաշտերը լրացնում ենք ինչպես «Կատալոգի» դեպքում, սակայն այստեղ կան մի քանի առանձնահատուկ դաշտեր, որոնցից է օրինակ «Պատվիրվող ապրանքի քանակի սահմանափակում» դաշտը.



«Պատվիրվող ապրանքի քանակի սահմանափակում» դաշտում լրացնում ենք տվյալ ապրանքի պատվիրման առավելագույն քանակ, որից ավել պատվիրելու դեպքում կայքում «ավելացնել զամբյուղի մեջ» կոճակը չի աշխատի և թույլ չի տա այդ քանակից ավել ապրանք պատվիրել:



«Ինտերնետ խանութ» համակարգում ունենք ևս մեկ դաշտ, որը կոչվում է «Լավագույն վաճառք»: Տվյալ ապրանքի համար այն նշելով, մենք առանձնացնում ենք որոշակի թվով ապրանքների խումբ, որոնք կարող ենք կայքում ցուցադրել որպես «Լավագույն վաճառք» բաժին՝ կայքի այցելուի ուշադրությունը կենտրոնացնելով այդ խմբի ապրանքների վրա:

Ինտերնետ խանութներին կարելի է միացնել օնլայն վճարային համակարգեր, որոնք տրամադրում են բանկերը: Կայքը պատրաստ լինելուն պես դուք դիմում եք բանկ, ցույց տալիս ձեր արդեն իսկ պատրաստ կայքը և պայմանագիր կապելով բանկի հետ միանում իրանց համակարգին: Բանկը մեզ տրամադրում է իրենց API համակարգի տեխնիկական բնութագիրը, որի օգնությամբ մենք կայքում ինտեգրում ենք այդ համակարգը:

Օգտատերերի կառավարում

Ինչպես երևում է անվանումից այս ենթահամակարգում կառավարում ենք օգտատերերին: Այստեղ կարելի է ավելացնել, խմբագրել և հեռացնել օգտատերերին, նրանց տվյալներն ու լիազորություններ սահմանել նրանց համար:

Բացելով այս բաժինը տեսնում ենք սա.

Երևում է, որ ունենք 2 օգտատեր՝ մեկը admin - ադմինիստրատոր իսկ մյուսը editor – խմբագրիչ: Նրանց կարելի է վերագրել լիազորություններ դիտելու կամ կառավարելու այս կամ այն բաժինը:

Խմբագրելով ադմինիստրատորին տեսնում ենք սա.



Այստեղ կարելի է փոխել օգտանունը, գաղտնաբառը, էլ. հասցեն և լիազորել կառավարելու ադմին համակարգում կառավարվող բաժինները: Կարող են լինել բազմաթիվ օգտատերեր, սակայն ադմին լինում է միայն մեկ հատ: Եղեք ուշադիր օգտատերերին լիազորություններ տալիս: Ադմինը կարող է ապաակտիվացնել մյուս օգտատերերի հաշիվները՝ փակելով մուտքը ադմին համակարգ:

Լիազորությունների սահմանումը իրականացվում է կանաչ ցուցակով: Սեղմելով Ctrl կոճակը, նշում ենք ցուցակից այն բաժինները, որոնց կառավարումը ցանկանում եք թույլատրել տվյալ օգտատիրոջը:

Վերջաբան

Այստեղ նկարագրվում է մեր կողմից մշակված CMS համակարգի հետ աշխատելու հիմնական սկզբունքները: Ստանալով այդ հմտությունները դուք կկարողանաք հեշտությամբ և էֆեկտիվորեն լուծել ձեր առաջ դրված խնդիրները: Իհարկե կայքի ոչ բոլոր փոփոխություններն են արվում ադմին համակարգի օգնությամբ:

Ավելի խորքային փոփոխությունները արվում են կատարելով փոփոխություններ կայքի տվյալների բազայի կամ ֆայլերի մեջ: Դրա համար անհրաժեշտ է մասնագետի օգնություն, այլապես դուք կարող եք խախտել կայքի բնականոն աշխատանքը՝ առաջացնելով ծրագրային սխալներ: Այդ պատճառով էլ խորհուրդ չի տրվում կատարել այդպիսի միջամտություններ:

Այստեղ ներկայացված համակարգերն ու ենթահամակարգերը կոնկրետ պրոյեկտի շրջանակներում կարող են փոքր ինչ տարբերվել այստեղ նկարագրվածներից՝ ասենք դաշտերով կամ որոշակի ֆունկցիոնալով: Սակայն տիրապետելով վերը նշված բազային գիտելիքներին դուք կարող եք ինքնուրույն կողմնորոշվել և գրագետ կերպով իրականացնել ձեր առջև դրված խնդիրները:

Այն դեպքերում, երբ դուք կարդացել եք, սակայն այնուամենայնիվ դժվարանում եք որոշակի հարցերում, կարող եք դիմել մեզ և ստանալ տեխնիկական աջակցություն:

Շատ կազմակերպություններում կայքով զբաղվող աշխատակիցները հաճախ են փոխվում: Նախորդ աշխատակիցը հաջորդին ոչ մի գիտելիք չի փոխանցում կայքի կառավարման համար: Նա էլ փորձում է իրականացնել այդ աշխատանքները ինչպես կարողանում է և արդյունքում ունենում ենք ավիրված կայք: Այս ձեռնարկի նպատակն է կանխարգելել կայքի նկատմամբ այդպիսի «բարբարոսությունները» ;))) Մի ծուլացեք, անպայման ժամանակ գտեք և կարդացեք այս ձեռնարկը՝ այն ձեզ կօգնի ավելի լավ կառավարել ձեր կայքը:

Մաղթում ենք ձեզ մեծ հաջողություններ.

MS թիմ

Վեբ կայք՝ https://www.makyansystems.com/

Էլ. հասցե՝ info@makyansystems.com

Հեռախոս՝ +374 94 81-31-70, +374 33 81-31-70

Հասցե՝ ՀՀ, 0012, Երևան, Վաղարշյան 12ա

MAKYAN SYSTEMS © 2006 -2023